ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՀՐԱՊԱՐԱԿ N 1 ՀԱՍՑԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրենի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի մարտի 1-ին N 2457 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ջիվանու հրապարակ N 1 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24092014-08-0035) 5,92178 (հինգ ամբողջ իննսուներկու հազար հարյուր յոթանասունութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (ծածկագիր 08-001-0762-0001) 99 (իննսունինը) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝ բարեկարգման, կանաչապատման և ըստ նպատակային նշանակության օգտագործելու նպատակով:

Ռ. ՍԱՆՈՅԱՆ
Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատարող՝ Հ.Գասպարյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՀՐԱՊԱՐԱԿ N 1 ՀԱՍՑԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Շչորսի փողոց N 1 հասցեի շենքը, որը գտնվում է այգու տարածքում, վերակառուցվելու է «Սիմոնյան» կրթական հիմնադրամի միջոցներով, որպես բարեգործական ծրագիր՝ ԹՈՒՄՈ կենտրոն կազմակերպելու համար: Ծրագրի բաղկացուցիչ մաս է նաև այգու տարածքի բարեկարգումը և կանաչապատումը: Որոշման ընդունումը պայմանավորված է ապահովելու ծրագրի ամբողջական իրականացումը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՀՐԱՊԱՐԱԿ N 1 ՀԱՍՑԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ «ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ջիվանու հրապարակ N 1 հասցեի կենտրոնական զբոսայգու հողամասը «Սիմոնյան» կրթական հիմնադրմին անհատույց օգտագործման տրամադրելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: